

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2017թ. գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

14 ապրիլի 2017թ.

Ներկայեին՝ գիտխորհրդի 20 անդամներից 19–ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԺԵ.00.01– «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Աննա Պետրոսի Մանջիկյանի «Ծիրթոն պարտեզայինի տերևների եթերայուղից ստացված դեղաձևերի դեղաբանական ակտիվության հետազոտումը» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Աննա Մանջիկյան, դեկ. դեղ.գ.դ. Մ. Գ. Բալասանյան)
2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի՝ որակի ապահովման մշտական հանձնաժողով ստեղծելու մասին: (զեկուցող՝ Ա. Սաղյան)
3. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 4-րդ կուրսի ուսանողների պետական քննությունների և ավարտական աշխատանքներին համապատասխան կրեդիտներ հատկացնելու մասին:
(զեկուցող ուս. աշխ.գծով փոխտնօրեն, ք.գ.թ. Ս. Վարդապետյան)
4. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ և ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ԺԵ.00.01– «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Աննա Պետրոսի Մանջիկյանի «Ծիթրոն պարտեզայինի տերևների եթերայուղից ստացված դեղաձևերի դեղաբանական ակտիվության հետազոտումը» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի քննարկում և հաստատում:

Հսկեցին՝ Ա. Մանջիկյանին, ով ներկայացրեց ատենախոսական աշխատանքը և պատասխանեց հարցերին:

Ելույթ ունեցավ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտությանամբիոնի ասիստենտ, գրախոս կ.գ.թ.՝ Ն. Հովհաննիսյանը, ով ներկայացրեց Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի նախագիծը:

Ն. Հովհաննիսյանը նշեց, որ Աննա Պետրոսի Մանջիկյանի ատենախոսական աշխատանքը նվիրված է Հայաստանում մշակվող ծիթրոն պարտեզայինի տերևների եթերայուղից ստացված դեղաձևերի դեղաբանական ակտիվության հետազոտմանը:

Ներկայացված ատենախոսական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ դեղերի հայտնաբերումը և զարգացումը դեղաբուսական հումքից շարունակում է մնալ ժամանակակից դեղագիտության կարևոր հիմնախնդիրներից: Բույսերում պարունակվող դեղաբանական ակտիվության մետաբոլիտներով է պայմանավորված դրանց դեղաբանական ակտիվության բավական լայն սպեկտրը, ինչը կարևորում է վերջիններիս կիրառումը պոլիվալենտ ախտաճնությամբ բնութագրվող շեղումների շտկման համար: Ներկայումս հատկապես մեծ ուշադրության են արժանանում հակամանրէային և հակաբորբոքային ազդեցությամբ օժտված դեղաբույսերը:

Հայաստանում մշակվող ծիթրոն պարտեզայինի եթերայուղից ստացված դեղաձևերի դեղաբանական ակտիվության ուսումնասիրումը հնարավորություն է տալիս օգտագործել Հայաստանի բուսական պաշարները՝ տեղային դեղարտադրության խթանման նպատակով: Այս առումով Հայաստանում մշակվող ծիթրոն պարտեզայինի բուսական հումքի ֆիտոքիմիական վերլուծությունը, տերևներից եթերայուղի ստացումն ու դրա քիմիական բաղադրության ուսումնասիրումը, եթերայուղի և դրա հիման վրա ստացված քսուքի հակաբորբոքային և վերքամոքիչ ակտիվության ուսումնասիրումն ինչպես նաև ստացված եթերայուղի ստացված եթերայուղի հականոցիցեպտիվ և հակամանրէային ակտիվության ուսումնասիրումը մնում է արդիական:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակն առաջին անգամ ուսումնասիրել է Հայաստանում մշակվող ծիթրոն

պարտեզայինիտերնների եթերայուղի քիմիական բաղադրությունը և եթերայուղիցստացված դեղաձևերի դեղաբանական ակտիվությունը:

Հետազոտությունների հիման վրա հեղինակը ցույց է տվել, որ Հայաստանում մշակվող ծիթրոն պարտեզայինի եթերայուղն օժտված է հակա-նոցիցեպտիվ և հակաբորբոքային, հակաբակտերիալ, հակասնկային ակտիվությամբ: Հեղինակի կողմից մշակվել է ծիթրոն պարտեզայինի եթերայուղի հիման վրա քսուքի ստացման տեխնոլոգիական սխեման և բացահայտվել վերջինիս վերքամոքիչ հատկությունը:

Աննա Պետրոսի մանջիկյանի կողմից կատարված հետազոտական աշխատանքների արդյունքում Հայաստանում մշակվող ծիթրոն պարտեզայինի եթերայուղում հայտնաբերվել են արոմատիկ մոնոտերպենների շոշափելի քանակներ, ինչը կարող է հիմք հանդիսանալ բուսական հումքը որպես տերպենոիդների ստացման աղբյուր կիրառելու համար: Ծիթրոն պարտեզայինի եթերայուղի հակաբորբոքային, հակաանոցիցեպտիվ, հակամանրէային հատկությունները հեռանկարներ են բացում դրաից ստացված դեղաձևերը ներառել ցավով, բորբոքմամբ և վարակներով ուղեկցվող ախտաբանական գործընթացների բուժման սխեմաներում:

Հեղինակի կողմից դրվել և հաջողությամբ լուծվել են հետևյալ խնդիրները.

- կատարվել է բուսական հումքի ֆիտոքիմիական վերլուծություն
- իրականացվել է ծիթրոն պարտեզայինի տրերններից եթերայուղի ստացում և դրա ֆիտոքիմիական վերլուծություն,
- ուսումնասիրվել է եթերայուղի և դրա հիման վրա ստացված քսուքի հակաբորբոքային ակտիվությունը,
- ուսումնասիրվել է եթերայուղի հակամանրէային ակտիվությունը և դրա հիման վրա ստացված քսուքի վերքամոքիչ ակտիվությունը:

Գրախոսը նշեց, որ աստենախոսության վերաբերյալ ունի հետևյալ դիտողությունները.

- ✓ Գրական անկնարկում բերված են բուսական ծագում ունեցող հակամանրէային միջոցների և հակաբիոտիկների նկատմամբ կայունությամբ օժտված ախտածին մանրէների տարածման վերաբերյալ տվյալներ, սակայն լուսաբանված չեն այդ կայունության մեխանիզմները, ինչը ենթադրում է նոր դեղերի համար թիրախների ընտրություն: Աստենախոսության արդյունքները վկայում են ծիթրոն պարտեզայինի տերնների եթերայուղից ստացված դեղաձևերի հակամանրէային ակտիվության մասին, սակայն հակամանրէային ազդեցության հնարավոր մեխանիզմները չեն քննարկվում:
- ✓ Գրական ակնարկում կատարվել է ծիթրոն պարտեզայինի դեղաբանական հատկությունների մանրակրկիտ վերլուծություն, սակայն, արդյունքների քննարկման բաժնում չկա աստենախոսի կողմից ստացված տվյալների և գրականության մեջ հայտնի տվյալների համեմատական վերլուծություն՝ թե՛ դեղաբանական հատկություններով օժտված միացությունների քանակական և

որակական կազմի վերաբերյալ, թե՛ ատենախոսի կողմից առաջարկվող դեղաձևերի առավելությունների վերաբերյալ:

Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ՝ ակադեմիկոս Սադյանը, ք.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը, ք.գ.թ. Ս. Վարդապետյանը, ովքեր նշեցին, որ Ա. Մանջիկյանի կողմից կատարված աշխատանքի բովանդակությունն ավելի լավ արտացոլելու համար ճիշտ կլիներ աշխատանքն անվանել «Ծիթրոն պարտեզայինի տերևների եթերայուղերի և դրանից պատրաստված դեղաձևերի դեղաբանական հատկությունների հետազոտումը» և տրվեր համեմատական բնութագիր, առավել ևս, որ աշխատանքում մանրակրկիտ հետազոտվել է ստացված եթերայուղի քիմիական բաղադրությունը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ արված դիտողություններն ամեննին չեն նսեմացնում ներկայացվածատենախոսության արժեքը, այն իր ծավալով և բովանդակությամբ լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈՂ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հայցորդ Աննա Պետրոսի Մանջիկյանն արժանի է ԺԵ.00.01 -« Դեղագիտություն» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Նշվեց նաև, որ Ա. Մանջիկյանի կողմից կատարվել է ծավալուն գիտական աշխատանք, որն ունի կարևոր կիրառական նշանակություն և առաջարկեցին հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի կողմից ներկայացված կարծիքը:

Որոշեցին՝ (միաձայն)

1. Հաստատել Աննա Պետրոսի Մանջիկյանի «Ծիթրոն պարտեզայինի տերևների եթերայուղից ստացված դեղաձևերի դեղաբանական ակտիվության հետազոտումը» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի պաշտոնական կարծիքը:
2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի՝ որակի ապահովման մշտական հանձնաժողով և մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին: (զեկուցող՝ Ա. Սադյան)

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ, ակադեմիկոս Ա. Սադյանին, ով ներկաներին տեղեկացրեց, որ համաձայն ԵՊՀ գիտական խորհրդի 2012թ. Փետրվարի 8-ի թիվ 1 նիստի №1/1 որոշման անհրաժեշտ է ստեղծել Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի Որակի ապահովման մշտական հանձնաժողով: Հանձնաժողովի հիմնական գործառույթներն են՝ ուսումնական գործընթացների որակի ապահովումը ֆակուլտետներում, կրթական ծրագրերի հաստատումը և պարբերական վերանայման գործընթացների կազմակերպումը և վերահսկումը: Ա. Սադյանը նշեց, որ համաձայն այդ որոշման հանձնաժողովը պետք է կազմված լինի 5 անդամներից (որոնցից մեկը ուսանող):

Ա. Սադյանը նշեց, որ անհրաժեշտ է ստեղծել նաև մրցութային հանձնաժողով, որը պետք է իրականացնի ֆարմացիայի ինստիտուտի

պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրություն և յուրաքանչյուրի վերաբերյալ ներկայացնի իր գրավոր կարծիքը:

Որոշեցին՝ (միաձայն) Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որակի ապահովման մշտական հանձնաժողովի ստեղծումը հանդիսանում է ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի զարգացման ռազմավարական ծրագրի դրույթների իրականացման կարևոր գրավական՝

2.1 Ստեղծել Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի Որակի ապահովման մշտական հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Հովհաննեսյան Ռուբեն (նախագահ) բժ.գ.դ., Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ,
2. Վարդապետյան Սամվել ք.գ.թ. ուս. աշխատանքների գծով փոխտնօրեն,
3. Հովհաննիսյան Անահիտ, կ.գ.թ., Ֆարմաթեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ,
4. Միմոնյան Հայարփի, ք.գ.թ. Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ,
5. Ոսկանյան Անուշ, բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի

2.2 Հանձնարարել Որակի ապահովման հանձնաժողովի նախագահին՝ մեկամսյա ժամկետում մշակել և գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել հանձնաժողովի գործունեության աշխատակարգը:

2.3 Ստեղծել Ֆարմացիայի ինստիտուտի մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Նախագահ՝ ք.գ.թ.	Տաթևիկ Սարգսյան
Անդամներ՝ ք.գ.թ.	Անի Դադայան
ուս. լաբ. վարիչ	Արամ Հակոբյան

2.4 Որոշումն ուժի մեջ էմտնում ընդունման պահից:

3 ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 4-րդ կուրսի ուսանողների պետական քննությունների և ավարտական աշխատանքներին համապատասխան կրեդիտներ հատկացնելու մասին:

(զեկուցող ուս. աշխ.գծով փոխտնօրեն, ք.գ.թ. Ս. Վարդապետյան)

Լսեցին՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն ք.գ.թ. Ս. Վարդապետյանին, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց այն մասին, որ ս.թ. մայիսի 10-ից Ֆարմացիայի ինստիտուտում անց են կացվելու պետական քննություններ, որոնց կհաջորդեն ավարտական աշխատանքների պաշտպանությունները: Քանի որ 13-ից բարձր ՄՕԳ ունեցող ուսանողները պետք է հանձնեն երկու ավարտական քննություն, իսկ դրանից բարձր ՄՕԳ ունեցողները՝ 1 պետական քննություն և կատարեն ավարտական աշխատանք, ուստի դրանց համար անհրաժեշտ է սահմանել համապատասխան կրեդիտներ: Ս. Վարդապետյանն առաջարկեց պետական քննություններից յուրաքանչյուրին և ավարտական աշխատանքներին հատկացնել 8-ական կրեդիտ:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ ք.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը, ք.գ.թ. Հ. Միմոնյանը և ք.գ.թ. Ս. Պետրոսյանը, ովքեր հավանություն տվեցին առաջարկին:

Որոշեցին՝ (միաձայն) պետական քննություններից յուրաքանչյուրին և ավարտական աշխատանքներին հատկացնել 8-ական կրեդիտ:

4. Ընթացիկ հարցեր:

Նիստի ընթացքում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սաղյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա.Դադայան